



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Վեհափառ Հայրապետը առաջին անգամ ճանչցա 1936-ին, Էրբ Քոնստանցայեն Պուքրեշ եկա իբրև բժշկության ուսանող, ընտրված ըլլալով Ռումանիո հայ ուսանողության միության նախագահի հանգամանքով, իսկ Վեհափառը այն ժամանակները ուսուցիչ՝ Լևոն Պալճյան այս միության պատվո անդամն էր, իբրև շրջանավարտ Պուքրեշի գրականության և փիլիսոփայության համալսարանի:

Չիս ճանչցավ իմ մեկ դասախոսության ընթացքին, որ տեղի ունեցավ Հայ մշակույթի տան մեջ, որուն նյութն էր Կեոթեի «Ֆաուստ»-ի հիմնական գաղափարը: Դասախոսությունս այնքան շատ սիրեց, որ եկավ ու շնորհավորեց զիս և բաղձանք հայտնեց ինձ մոտեն ճանչնալ: Այդ օրվանից մեր միջև ստեղծվեցավ բարեկամություն մը, որ մինչև այսօր անխախտ մնաց: Այն շրջանին, երբ մեր թեմին առաջնորդն էր, ես եղա անոր անձնվեր գործակիցը, Ռումանիո թեմական խորհուրդի փոխնախագահի հանգամանքով:

Ան մոտ տասը տարիներ եղավ տեղի հայության անձնվեր հովիվը, պայքարեցավ եկեղեցիներու լավ կապակերպման Ռումանիո մեջ, երկիր մը, որ շատ տուժեց համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին: Իր գործունեության այս ժամանակաշրջանին, գործակցի հանգամանքով, կրցա հաստատել, թե իմ առաջ ունիմ անձ մը, որ ունի արտակարգ բարոյական հատկություններ, ես տեսա իր մեջը Աստուծո ուղարկած մը, սրտով մաքուր պատիվի տեր, համեստ ու բարեհոգի, կացությանց առջև պայծառատես և մարդոց լավ ճանչցող. ներքին ուժգնությամբ սակայն առանց աղմուկի և ներքին հարուստ կյանքով մը, որ անսպառ ուժի աղբյուր էր: Եվ գիտցավ շրջապատվիլ այնպիսի մարդոց հետ, որոնք մինևույն հատկություններ և մտավորական մղումներ ունին:

Կատարեբեմ հովվական այն այցելությունները, որոնք կատարեցինք միատեղ մեր թեմի բավական հարուստ հոգևոր շրջանակին, զանազան քաղաքներու հայ եկեղեցիները, ինչպես՝ Յաշ, Սուչավա, Պաքրու, Ռուման, Պրեյլա, Կալաց, Ֆոքշան, Փիթեշթ, Թուլչա, Պապատակ և Քոնստանցա, եկեղեցիներ, որոնք գոյություն ունեցած են Ալեքսանտրու ռումեն իշխանի ժամանակեն, որ հաստատեց Սուչավայի եպիսկոպոսությունը 1401-ին: Սուչավայի Չամբա վանքը և Ս. Հաճկատար եկեղեցին, ուր Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա սկսավ իր կրոնական կյանքը, և որոնք ունին գրեթե 500 տարվան հնություն մը և դարձած են պատմական ճարտարապետական հուշարձաններ:

Անշուշտ ճանչցած եմ նաև Վեհափառի մայրը՝ Սիրանույշ Տիրամայրը, որ ուժեղ անձնավորություն մըն էր և գիտցած էր իր միակ վաճկին տալ մասնավոր դաստիարակություն մը: Մեր առաջնորդ Վազգեն եպիսկոպոսին հետ առաջին անգամ այցելեցի հայրենիքս՝ Հայաստան, իբրև պատգամավոր թեմական խորհուրդին, երբ մասնակցեցանք երջանկափառության Գևորգ Զ կաթողիկոսի թաղման: Այցելությունը ինծի առիթ ընծաեց ճանչնալու հայրենիքի մեր եղբայրներուն և քույրերուն ժրջան աշխատանքը՝ կառուցելու նոր բարգավաճ հայրենիք մը Սովետական Հանրապետություններու մեծ ընտանիքին մեջ:

Ապա ուրախությունը ունեցա հանդիպելու Վեհափառ Հայրապետին հետ այն չորս այցելություններու ընթացքին, զոր կատարեց Ռուսմանիա իբրև հյուր Ռուսեն Օրթոդոքս Եկեղեցվո: Մեր հարաբերությունները տեղի ունեցան նաև թղթակցության միջոցով, միևնույն ուժգնությամբ և բարեկամությամբ: Այս երևույթը ինձ համար բարոյական քաջալերանք մը եղավ և այս պատճառով ալ իմ գործունեությունը եկեղեցական գիծով եղավ մշտական:

Արդ հաճույքն ունիմ Վեհափառ Հայրապետի 30-ամյա գործնական առթիվ հայտնելու իմ անսահման երախտագիտությունը բոլոր այն իրագործումներուն համար, որոնք տեղի ունեցան անցած այդ երեք տասնամյակներու ընթացքին մեր Առաքելական Եկեղեցվո համար, որ կապրի իր գոյության ամենափառավոր շրջաններեն մին: Վեհափառ Հայրապետը օժտված է հոգեկան բարձր առաքինություններով:

Վեհափառ Հայրապետի երեսուն տարիներու աստվածահաճո գործունեությունը քաջածանոթ է ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդին արտասահմանյան իր կատարած այցելություններու և փոխհարաբերություններու մշակման ընթացքին:

Իր գործունեության արդյունքը նաև եկեղեցական վերաշինումները և մշակութային գանձերու հարստացումը, որով Ս. Էջմիածինը օժտվեցավ կրոնական արվեստի ստեղծագործություններով, որոնք դարեր շարունակ պիտի ըլլան մեր Եկեղեցվո և իր հոգևոր պետին անջնջելի փառքը: Մենք ռուսմանահայերս մասնավոր ուրախությամբ տեսանք այս հսկայական իրագործումները և մենք բոլորս հպարտ ենք, որ մեր մեջեն ընտրվեցավ Ամենայն Հայոց կաթողիկոս, որուն կբաղձանք երկար կյանք, նորանոր հաջողություններ պապենական մեր սուրբ հավատքի ամրապնդման ուղղությամբ:

Այսօր վերածնված հայրենիքը կներկայանա պատասխանը տրված աշխարհին, որովհետև երկու միլիոն զոհեր տալե հետո, անխախտ մնացած է մեր ժողովուրդի կամքը ապրելու ու բարգավաճելու: Մենք, հեռուներեն, սփյուռքեն կմաղթենք հայրենաբնակ ժողովուրդին շարունակակա՛ն հաջողություններ, ու միևնույն ատեն որոշած ենք պահպանել մեր հայրենական ավանդությունները, մեր հավատքը:

Կփակեմ այստեղ վերհիշելով այն քանի մը տողերը, որոնք արտասանած էի Վեհափառ Հայրապետին հետ իմ առաջին հանդիպման ժամանակ, 1936-ին, երբ ըսի, թե հիմնական գաղափարը «Ֆառուս»-ին արտահայտված է հրեշտակներու երգեցողությամբ, որով կփակվի թատերգությունը՝ «Փրկել կարող ենք նրան, ով մշտապես կտքնի»:

ՊՐՈՖ., ԴՈԿՏ. ԳՐԻԳՈՐ ԲԱՄՊՈՒՔՅԱՆ
Թեմական խորհրդի փոխնախագահ

